

Բ. Մ. Հովակիմյան

ԽԱՋԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԸ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԵՐԵՆ ԼԵՋՈՒՆ

Հայ նոր գրականության հիմնադիր, դեմոկրատ-լուսավորիչ հաշատուր Աբովյանը կյանքի բարդ ուղի է անցել՝ գրական և կուլտուրական հարուստ ժառանգություն թողնելով իր և հարևան ժողովուրդների գալիք սերունդների համար:

Ժողովուրդների բարեկամության երգիչ հաշատուր Աբովյանը սոսկ հայ ժողովրդի պարծանքը չէ: Նիդամի Խյանջևիի, Շոթա Ռուսթավելու, Սյաթ-Նովայի, Միրզա Ֆաթալի Ախունդովի նման նա ևս համաժողովրդական մեծություն է, անդրկովկասյան ժողովուրդների լուսավորության և առաջադիմության համար պայքարի ակտիվ ջահակիրներից մեկը՝ XIX դարի առաջին կեսում:

Աբովյանին խորթ են եղել նեղ, ազգային սահմանափակությունները: Նա խարություն չի դրել ժողովուրդների միջև՝ հավասարապես սիրել է հային ու ադրբեջանցուն, քրդին ու վրացուն, ռուսին ու ուկրաինացուն, էստոնացուն ու գերմանացուն: Իր ամբողջ գործունեությամբ նա պայքարել է ժողովուրդների համերաշխության ու միասնության, բարեկամական կապերի ամրապնդման համար:

Մեծ և բազմազան են հումանիստ գրողի շոշափած թեմաների շրջանակները: Մեծ է նաև նրա ծառայությունը ադրբեջանական կուլտուրայի և, առանձնապես, լեզվի գնահատման հարցում: Նա տվել է ադրբեջաներեն լեզվի հիանալի բնորոշում, ամեն կերպ նպաստել է այդ լեզվի անաղարտ դասավանդմանը և ինքնուրույնության պահպանմանը:

Հաշատուր Աբովյանն ադրբեջաներեն լեզվին առաջին անգամ ծանոթացել է Քանաքեռում՝ իր պապենական հարկի տակ՝ մի գերդաստան, որի հոշակր միջև Հնդկաստան էր հասել: Որպես շուտ ընկալող և ինտիմական անձնավորություն, նա սիրով ու անսպառ հետաքրքրությամբ է լսել իրենց տանը հաճախակի հավաքվող, հայերեն ու ադրբեջաներեն լեզուներով հեքիաթասաց, պանազան «մասալեք» ու զրույցներ պատմող ծերունիներին: Աբովյանների հյուրերի թվում քիչ չեն եղել ադրբեջանցիները: Նրա պապը՝ Մելիք Ասլովը այնպիսի մեծ հարգանք է վայելել տեղացիների շրջանում, որ մահից հարյուր տարի հետ էլ, իր իսկ՝ Աբովյանի վկայությամբ «թուրք՝ ու հայ նրա գերեզմանովն էին օրթում ուտում»:

Բացի հայկական կենցաղում առօրյա օգտագործվող ադրբեջաներենից, Աբովյանն ուշի-ուշով լսել է նաև ադրբեջաներեն լեզվով աշուղական երգեր,

1 Հողվածում՝ թուրք, թաթար, թուրքերեն, թաթարերեն—կարդա՝ ադրբեջանցի, ադրբեջաներեն.—Բ. Հ.

որոնք անչնչելի տպավորություն են թողել նրա վրա դեռևս մանուկ հասակում: Քյորոզլու, Ասլի և Քյարամի, Աշուղ Ղարիբի մասին պատմությունները, աշուղական երգերը նա լսել է մանկուց, ոչ միայն իրենց տանը հյուրընկալած մարդկանցից, այլև իր վեպի հերոս, իր հեռավոր բարեկամ Աղասուց՝ մանուկ հասակում նրա ծնկներին խաղալիս:

Աբովյանը շատ է սիրել իր ժամանակակից հայտնի աշուղներ Ազբար Աղամի, Ալավերդու և ուրիշների երգերը: Նրան շատ են հուզել հատկապես իր ժամանակակից տաղանդավոր աշուղ Քելիշ օղլու երգերը: Սրանով պետք է բացատրել այն փաստը, որ նա «Աղասու խաղը»՝ 7109 տողանոց իր պոեմը հարմարեցրել է Քիշիշ օղլու երգերի ելանակին: Անհավանական չէ, որ նա դեռևս Թիֆլիսում սովորելիս լսել է Սայաթ-Նովայի երգերը և որոշ գործեր գրել նրա ազդեցությամբ («Ջանումս ջան չի մնաց, որ իմ ահվալն քեզ ասեմ»):

Աղրբեջաներեն լեզվին տիրապետելը, մշակույթն մոտիկից իմանալը պայմանավորված է նաև Աբովյանի և աղրբեջանցիների սերտ կապով: Նա մտերմական կապերով է կապված եղել ժամանակի պրոգրեսիվ գործիչների՝ աղրբեջանական դրամատուրգիայի հիմնադիր, փիլիսոփա և հասարակական գործիչ Միրզա Ֆաթալի Ախունդովի և լիրիկ բանաստեղծ Միրզա Շաֆի Վադեհի հետ: Աշխատելով Թիֆլիսի գավառական միկենույն ուսումնարանում, սկզբում Ախունդովի (1837—1840), իսկ այնուհետև Միրզա Շաֆու (1840—1843) հետ, Աբովյանը շատ բարձր է գնահատել այդ գործիչներին:

Աղրբեջաներեն լեզվին Աբովյանը հաղորդակից է եղել նաև Աղրբեջանում: Որպես տեղական և օտարերկրյա մի շարք լեզուներ իմացող անձնավորություն, Ռուսաստանից և Եվրոպայից գիտական այս կամ այն ուսումնասիրության նպատակով Անդրկովկաս եկած գիտնականների առաջնորդ և թարգմանիչ, նա բավականաչափ ճամփորդել է Աղրբեջանում ևս: Դորպատի համալսարանի պրոֆեսոր Աբիխի հետ 1844 թ. Աբովյանը շրջագայել է Երևան—Նախիջևան—Ցուլֆա—Օրդուբադ—Ադուլիս—Սեդրի, դեպի Հարավային Աղրբեջան և դրանց շրջակա վայրերով: Ինչ խոսք, տեղական բնակչության հետ նա շփվել է նրանց մայրենի լեզվով: Եվ ոչ միայն այսքան: Աղրբեջաներեն նա իմացել է այնքան, որ հնարավորություն է ունեցել նրանից թարգմանելու ռուսերեն և գերմաներեն:

Աղրբեջաներեն լեզվի իմացությունը է բացատրվում և այն, որ նա հայերեն և քրդերեն երգերի հետ հավաքել է աղրբեջաներեն երգեր և ծանոթագրած ուղարկել Գերմանիա՝ բանաստեղծ Ֆրիդրիխ Բոդենշտեդտին, որը հետագայում հանդգնել է յուրացնել Միրզա Շաֆու բանաստեղծությունները, մոլորության մեջ գցելով եվրոպական մի շարք գիտնականներին:

Աղրբեջաներեն լեզվի՝ Աբովյանի իմացությունը լավագույն կերպով արտահայտվել է «Թուրքի աղշիլը» պատմվածքում: Միկենույն հողի, միկենույն ջրի որդի Աբովյանի և թուրքի աղջկա միջև սրտառուչ զրույցը տեղի է ունեցել աղրբեջաներեն: «Բաջմ (բույր իմ), սկսեցի քուրքեբեմ ասիլ...»²,— իր իսկ Աբովյանի այս խոստովանությունից հետո երկու կարծիք լինել չի կարող, որ նա ազատ կերպով տիրապետել է աղրբեջաներեն լեզվին:

² Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, 1948, հ. 4, էջ 26 (ընդգծումն իմն է.—Ր. Հ.),

Աբովյանն աղբյուրներն ինքուհի ոչ միայն իմացել, այլ այն օգտագործել է իր ստեղծագործությունների մեջ: Աշխարհաբար լեզվով գրած իր գրքեր բոլոր գործերում գործածած բաղաձայնային բառերն ու ասույթները վկայում են նրա հարուստ բառապաշարը: Նրա օգտագործած աղբյուրներն բառերն ու ասույթները կարելի է այսպիսի ստորաբաժանման ենթարկել.

ա) առանձին բառեր

բ) հայերեն և աղբյուրներն բառերի միահյուսում

գ) հայերեն և աղբյուրներն միևնույն բառերի հաջորդում

դ) աղբյուրներն բառերի և նախադասությունների օգտագործում և դրանց թարգմանություն

ե) ասույթներ և դրանց թարգմանություն:

Հետևելով «հարիր հաղարի համար»՝ ժողովրդական լայն դանգվածներին հասկանալի գրականություն ստեղծելու իր սկզբունքին, Աբովյանն իր աշխարհաբար գործերում, որպես խոսակցական լեզվի մեջ մտած սովորություն, օգտագործել է աղբյուրներն բառեր: Աբովյանը պահանջում էր, որ գրականությունը «խալխի սրտովն ըլի», որ ամեն մարդ կարդալով հասկանա «աշխարհի բաները». մի խոսքով՝ գրականությունը արտացոլի կյանքը: Ժողովրդին հասկանալի լեզվով գրականություն ստեղծելու մասին «Ֆեոդորա կամ որդիական սեր» դրամայի առաջաբանում Աբովյանը գրել է. «Հույս ունիմ, որ ամեն մարդ էնդուր համար ավելի հավեսով կարդա, չունքի մեկ դժար բառ չկա միջումը՝ բոլոր աշխարհաբար ա: Մախսուս էս լեզվով գրեցի, որ գեղըցիք էլ հասկանան, քաղաքացիք էլ»:

Ոնշպես տեսնում ենք, Աբովյանը գիտակցաբար է իր գրվածքների մեջ աղբյուրներն բառեր մտցրել: Այդ քայլը նա կատարել է հիմք ընդունելով ժողովրդական խոսակցական լեզուն՝ որպես ժողովրդի կողմից գործածական լեզու: Այդ հանգամանքը նրան հնարավորություն է տվել ազատ վարվել իր գործածած բառերի հետ: Իսկ երբ աշխարհաբարն արդեն կդառնար տիրապետող գրական լեզու, օտար բառերի օգտագործման կարիքն այլևս չէր զգացվի: Նրա օգտագործած աղբյուրներն բառերն այնքան շատ են, որ օրինակներ բերելու անհրաժեշտություն չի զգացվում:

Հայերեն և աղբյուրներն բառերի միահյուսումը Աբովյանը տվել է առավելապես պատմողական պարագաներում, երբ նա ցանկացել է բացատրել այս կամ այն տրամադրությունը, գործողությունը, տալ բնության պատկերի նկարագրությունը, մարդու ներքին աշխարհի, ապրումների հետ կապված առանձնահատկությունները: Առօրյա խոսակցական լեզվի մեջ հանդիպող նրա մեջբերումներից տալիս ենք հայերեն և աղբյուրներն միահյուսված բառերի մի քանի օրինակ. արևին դուրբան, գյում էլավ, թայդաշ տղերք, ինչիմիշ անեմ, մեկ սհաթ քիմի, մեր շհարում, նահախ տեղը, նաֆաս քաշելով, ռաստ եկավ, սրտի գյորա, սրտի հասրաթը, քո դինր ու մասաբը գիդենա, ֆիքրները ցրիվ են տալիս, ֆիքրս բերի և այլն: Այս բառերն Աբովյանն այնպես միահյուսված է օգտագործել, ինչպես անբաժանելի է մեր ժողովուրդների բարեկամությունը:

Աբովյանն իր միտքը պարզ, պատկերավոր ասելու նպատակով սինոնիմ բառեր շատ է օգտագործել: Այդպիսի ձևակերպումների ժամանակ եղել են

ղեկաբեր, երբ իրար հաջորդել են հայերեն, աղբյուրներն, ինչպես և հայերեն ու աղբյուրներն միևնույն բառերի աղբյուրի գործածության ժամանակ Աբովյանն ասես ավելի է ընդգծել դրանց նշանակությունը՝ Որսյես դրանց հետաքրքիր նմուշ, հայերեն և աղբյուրներն միևնույն բառերի օրինակներից տալիս ենք՝ աթաշ կրակ, աշխարհքին ալամին, անթիվ անհեսաբ, դանդ ու շաբար, դուղն բեյինն, շնորհք մարիֆաթ, ոչ դիր կա ոչ թարեղ, ոչինչ չի ազդեց քյար շարեց, ոչ թիվ կա ոչ հեսաբ, քուշա փողոց. աղբյուրներն միանշանակ բառերից՝ ահվալն ու հալը, ավալի օֆտա, դին ու մասաբ, մալ ու գովլաթ, օլբից ալամից:

Նրա մեջ բերած աղբյուրներն բաղմամբիվ բառերի լարգամանությունը, որը մի անգամ ևս վկայում է, որ նա ազատ տիրապետել է այդ լեզվին, միանգամայն համապատասխանում է բնագրի լուծվածին: Այսպես, օրինակ, աթա (հայր), անա (մայր), բաջմ (քույր իմ), բայրաղը (դրոշակը), բայդուշ (բու), բաթմիշ ըլի (մեր գնա), գյոզ բալասի (աչքի որդի), եմ (ուտելիք), դարա (սև), շորակ (հաց), ուշվաթ (կաշառ), փիադա (ոտնավոր) և այլն:

Իր մի շարք գործերում և, առանձնապես, «Վերք Հայաստանի» վեպում, Աբովյանը գործ է ածել աղբյուրներն մի քանի նախադասություն, միաժամանակ տալով դրանց հայերեն ճշգրիտ թարգմանությունը, ինչպես և հայերենի և աղբյուրներն խառնուրդով նախադասություններ: Որսյես առաջին տեսակի նմուշ նշենք մի քանի օրինակ: «Վերքի» տարբերակում հայազգի աշուղ Վիրապի մասին ասվում է՝ «Փիր օլսուն, փիր, ջանմ սան ջանմ» կամ թե՛ «դոջա բարա ալա՛հ սախլանն». Աղասու մասին ասվում է՝ «Հայիֆ, հայիֆ՝ քի էրմանի սան» (ափսոս, ափսոս՝ որ հայ ես): Այդ նույն տարբերակում Աբովյանը նույնիսկ Աղասուն հայհոյել է տալիս աղբյուրներն՝ այնքան ուժեղ է նրա ատելությունը Թագուհուն փախցնող ֆառաշների նկատմամբ:

Աղբյուրներն լեզվի կոտորիտը պահպանելու համար նա օգտագործել է ոչ միայն առանձին բառեր, այլև չափածո տողեր (Մհառլամի սուզը), իսկ աղբյուրների սուզի վերջում ուղղակի կարդում ենք. «Սասն քյաս-վե՛ր ջանն իմամ ուշաղի. սանն նա՛հադղն վար, քի դհա ուղըն բըղդան դոնդարիսան, աղլիրսան, բաղրիսան, դուրն, դուրն դեղախ» (ձենդ կտրիր, ջանդ տուր, իմամի որդի, քո ինչ հադղն ա, որ էլի երեսդ մեղանից քաշում ես, լալիս ես, ձեն տալիս):

Որսյես իր ժողովրդի հերոսությունների ու վերքի երդիչ, Աբովյանը շատ է սիրել նրա սրամիտ ասույթները: Դրանց հետ միաժամանակ նա օգտագործել է աղբյուրների ասույթներ՝ դրանք զուգորդելով հայերեն թարգմանությամբ: «Վերքում» նա բերում է այսպիսի ասույթներ՝ «Քեֆ սանն, քյանդ քյոլսլանն» (քեֆը բռնը, դեղը տանուտերինը), «Բիանա բիր, բիլմիանա բին» (իմացողին մեկ, չիմացողին հաղար), «Յուղան չիսան գյոզի չիար» (ճամփից դուրս եկողի աչքը դուրս կգա), «Բիր գյորանդա յուղաշ, իբի գյորանդա՛ դարդաշ» (մեկ տեսնելիս ընկեր, երկու տեսնելիս՝ ախպեր), «Էլա մուսուրման օլուրսդ, քի աթանըղ խաշի թանրմիրսիդ» (էնպես թուրք եք դառել, որ ձեր հոր խաշն էլ չեք ճանաչում):

Աբովյանն այս ապույթները հետևողականորեն մշակել և հղկել է, դարձնելով ավելի պարզ ու առավել հարողատ: Այսպես, օրինակ, «Քեշիշ բելա ի՞շ» ասացվածքը «Վերքի» տարբերակում ունեցել է՝ «Տերտերն էլ էսպես բան» ձևը, որը հետագայում նա մշակել, դարձրել է «Տերտերն ու էսպես գո՞րծ»:

Այսպիսով, տեսնում ենք, որ աղբրեջաններն լեզվի իմացությունն Աբովյանին հնարավորություն է տվել լայնորեն օգտագործելու աղբրեջանական բառն ու բանը, որը մատչելի ու գործածական էր մեր ժողովրդի կողմից:

Այսուհանդերձ, դեպի աղբրեջաններն լեզուն ունեցած Աբովյանի վերաբերմունքը միայն լեզվի իմացությամբ և գործածությամբ չի սահմանափակվում: Նա խորապես մտահոգվել և ակտիվորեն պայքարել է աղբրեջանական լեզվի ինքնուրույնության համար:

Իր մանկավարժական գործունեության հենց սկզբնական շրջանից նա հավասար ուշադրություն է դարձրել աղբրեջանցի մանուկների կրթությանը: Դեռևս Դորպատում սովորելու տարիներին Աբովյանը գրել է, որ «ոչ միայն հայերը, այլ ամբողջ Ասիան... ինձ վրա պարտավորություն են դնում, երբևր չհրաժարվել այն ծառայությունից, որ ես կարող եմ մատուցել»: Ահա ուրեմն, եկել էր ժամանակը, որ նա կենսագործեր իր գաղափարները՝ միաժամանակ կրթեր նաև աղբրեջանցի երիտասարդներին:

1838 թ. մայիսի 19-ին, ակադեմիկոս Խրիստիան Ֆրենկին գրած նամակում Աբովյանն ասում է. Երկու հարյուրի չափ աշակերտներ ամեն օր շրջապատում են ինձ. սրանց սերը, սրանց համակրությունը բարձրացնում է ինձ ամեն երկրայինից վեր... Մանուկներին կրթելն աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար և դեռ ավելի, բանի որ սրանց մեծագույն մասն իմ ազգակիցներն են, իսկ մյուսները՝ վրացի ու թաթար իմ երկրացիները:

Աբովյանը ավել է լեզվի հիանալի բնորոշում, այն համարելով մի այնպիսի ազնիվ գործիք, որով մարդիկ արտահայտում են իրենց հոգեվիճակը, մտքերը հաղորդում ուրիշներին: Լեզուն ազգային առանձնահատկության, կուլտուրայի և կեցության արտացոլման միջոց է: Լեզվի՝ որպես մարդկանց հաղորդակցության կարևոր միջոցի էվոլյուցիան՝ կրած փոփոխությունն ու զարգացումը նա իրավացիորեն կասել է ժամանակակից հասարակական-քաղաքական պայմանների հետ, լեզվի զարգացման պատմությունն անխզելիորեն կապել ժողովրդի պատմության, հասարակական կյանքի առաջընթացի հետ: «Լեզվի մեջ,—ասում է Աբովյանը,—ինչպես մաքուր հայելու մեջ, ցուցնում է մի ազգի առանձնահատկությունը, նրա կուլտուրան, մինչև անգամ նրա քաղաքական վիճակը: Ինչպես առանձին անհատի մոտ տարիքի աճման դեպքում, այնպես էլ յուրաքանչյուր ժողովրդի մոտ նրա հոգևոր զարգացման աճման կամ նվազման հետ միասին լեզուն էլ բոլորովին այլ կերպարանք է ստանում»⁴:

Լեզվի նկատմամբ ունեցած իր այս ընդհանուր սկզբունքով առաջնորդվելիս, աղբրեջաններն լեզվի դիահատության հարցում առաջինը, որ ծառացել է նրա առաջ, եղել է աղբրեջաններն լեզվի ինքնուրույնությունը պահպանելու և այն օտարամուտ բառերից ազատելու հարցը: Դնելով լեզվի մաքրության

⁴ «Դիվան Խաչատուր Աբովյանի», 1940, հ. 1, էջ 111:

⁵ Խ. Աբովյան, ԵԼԺ, հ. 5, էջ 15:

անհրաժեշտ հարցը, նա նշել է, որ դա հնարավոր չէ միանգամից կատարել, որ դա պետք է արվի աստիճանաբար:

Ահա՝ լեզվի, գրականության, կուլտուրայի զարգացման համար է, որ Արովյանը, որպես անհրաժեշտ պայման, առաջ է քաշում ժողովրդի քաղաքական ազատության հարցը: Եթե մի ժողովուրդ քաղաքականապես ազատ չէ, առավել ևս երբ նա ասիմիլյացիայի է ենթարկվում, ինչ խոսք կարող է լինել գիտության և կուլտուրայի զարգացման մասին այն ժամանակ, երբ, մանավանդ, ինչպես Արովյանն է ասում, մարդ ստրուկ է իր իսկ սեփական հայրենիքում: Նա շատ դիպուկ է րնութագրել այս զորավոր ճշմարտությունը: «Մեր բախտիցը,— գրում է նա,— ժամանակն էնպես ծովել էր մինչև հիմա, որ մարդ իր գլուխը չէր կարում պահել. ո՞ւր մնա լեզվի դարդը քաշիլ: Էս ա պատճառը՝ որ մեր նոր լեզվի կեսը Թուրքի ու Պարսից բառա»⁶:

Պարսկա-թուրքական տիրապետության պայմաններում, ինչ խոսք, ժողովրդի հետ լեզուն էլ կործանման վտանգին էր ենթարկված: Ժողովրդին պահում էր լեզուն, լեզվին՝ ժողովուրդը: Եվ ահա ուսու-պարսկական պատերազմից հետո, երբ երկրում սկսեց մի փոքր խաղաղություն տիրել, սկսվեց աշխուժանալ և կրթության հարցը:

Խոսելով ժողովուրդների հին ու նոր լեզուների մասին, Արովյանն անդրադարձել է նաև ադրբեջաներենին՝ տալով աշխարհաբարի և ադրբեջաներեն լեզվի համեմատական նմանությունը: «Հին ու նոր լեզուների գլխավոր տարբերությունը թեքման և շարահյուսության մեջ է,— ասում է Արովյանը— Գրաբարում, ինչպես և բոլոր նոր եվրոպական լեզուներում, որոշիչները, հատկացուցիչները, բացահայտիչները գրվում են որոշյալներից, հատկացյալներից և բացահայտյալներից հետո, իսկ նախդիրները՝ առաջ, մինչդեռ նոր հայերենում— թաթարերենի նման— հակառակն է... Իսկ այն, ինչ հակառակ է քերականական բոլոր կանոններին, այդ նախդիրներից շատերի հոլովումն է, որ ոչ մի լեզվում չի լինում, բացի թաթարերենից և նոր հայերենից (աշխարհաբարից)»⁷:

Ինչպես տեսնում ենք, վերը շարադրված մտքերը ցույց են տալիս, որ Արովյանն ինչ որ շափով իմացել է նաև ադրբեջաներենի քերականական օրենքները, որով նա հնարավորություն է ունեցել համեմատություններ կատարելու ինչպես եվրոպական նոր լեզուների, այնպես էլ աշխարհաբարի հետ: Թերևս սա է պատճառը, որ որոշ գրականագետների (Գ. Անտոնյան⁸, Ա. Ա. Սերիզադե⁹) հիմք է տվել Արովյանին վերագրելու նրա արխիվում պահվող ադրբեջաներեն լեզվի քերականության ուսման լեզվով գրված ձեռնարկը, որը կրում է КРАТКІЯ ПРАВИЛА для словеснаго употребленія языка Тюрки (гатарскаго), на коем говорят во всем Закавказском крае, в Азербейджане и почти во всей Персии՝ վերնագիրը¹⁰:

⁶ Սույն տեղում, հ. 3, էջ 64:

⁷ Սույն տեղում, հ. 5, էջ 48:

⁸ Դ. Անտոյան, Ериэни во Азербайжан халгларини эдебии элэгеси, Баку, 1955.

⁹ А. А. Сеид-заде, Связи Хачатура Абовяна с передовыми представителями общественной мысли Азербайджана XIX в. («Известия» АН Азерб. ССР, 1956, № 3, стр. 63—66).

¹⁰ ՀԱՅԿ կուլտուրայի միևնույնության գրականության և արվեստի թանգարան, Արովյանի ֆոնդ, № 28.

Աղբյուրներն լեզվի քերականության ձևերն արկն Աբովյանի արխիվում գտնվելու այս փաստն ինքնին չափազանց ուշագրավ, միաժամանակ բնական երևույթ է։ Սա կրկին և կրկին հաստատում է նրա հետաքրքրությունը ոչ միայն աղբյուրներն լեզվի, այլև մատաղ սերնդի կրթության նկատմամբ ցուցաբերած հոգատարությունը։

Բայց այդ բոլորը դեռևս հիմք չեն տալիս պնդելու, որ դրա հեղինակը Աբովյանն է։ Նախ՝ ձևերն արկում չկա ոչ Աբովյանի և ոչ էլ որևէ այլ հեղինակի անունը, Աբովյանի ձեռքով չի գրված։ Ինչպես իր ժամանակի այլ դասագրքեր, այնպես էլ այս ձևերն արկը արտագրություն է։ Ձևերն արկը արտագրվելուց հետո, մեկը, հավանաբար հեղինակը, բայց ոչ Աբովյանը, որովհետև ձեռագիրը նրանք չէ, ուղղումներ ու հավելումներ է կատարել տեքստում, լրացրել արտագրողի կողմից՝ հավանաբար ֆրանսերեն չիմանալու պատճառով գիտակցաբար բաց թողած ֆրանսերեն արտահայտությունները։

Աղբյուրներն լեզվի քերականության այս ձևերն արկը մեր կարծիքով, գրվել է Անդրկովկասի գիմնազիաներում որպես դասագիրք օգտագործելու նպատակով։ Տիրապետելով ֆրանսերենին և մասամբ արաբերենին ու պարսկերենին, հեղինակը համեմատականներ կատարելու մեկ երկու փորձ է անում։ Սակայն համեմատությունների և օրինակների գերակշռող մասը նա բերում է ռուսերենից, իսկ հայերենից՝ ոչինչ։ Պարզ է, եթե դրա հեղինակը Աբովյանը լիներ, համեմատությունների անհրաժեշտության դեպքում նա չէր բավարարվի երեք լեզվով միայն, այլ առնվազն հինգ լեզվով կբերեր իր օրինակները, ինչպես դա նկատելի է քերականության վերաբերյալ նրա գործերում։

Նկենելով այս բոլորից, մենք հակված ենք կարծելու, որ Աբովյանի արխիվում պահվող աղբյուրներն լեզվի քերականության հեղինակը ռուս անձնավորություն է։ Եվ դա Թիֆլիսի գիմնազիայի դասատու Նիկոլայ Դեմենտևն է։

ՀԱՅԿԻ կուլտուրայի միևնույնության գրականության և արվեստի թանգարանում պահվող Գաբրիել Սունդուկյանի անձնական գրադարանի գրքերի մեջ մի այսպիսի դասագիրք կա.

ТАТАРСКИЙ БУКВАРЬ

ترکی الف بی

В пользу

Русских, учащихся в Закавказских училищах

Издан при Тифлисской Гимназии

Тифлис 1839 года

В Типографии Я. и Д. Арзановых

Հեղինակը գրքին կցել է մի առաջաբան, որը շատ արժեքավոր տեղեկություններ է տալիս XIX դարի 30-ական թվականներին աղբյուրներն լեզվի նկատմամբ ցարական Ռուսաստանի հետաքրքրության, դասագրքերի բացակայության և դրանց հետ կապված այլ հարցերի մասին։

Դասագրքի հեղինակը՝ Н. Д. - ն¹¹ իր առաջաբանում հայտարարում է, որ «եթե ես սրանում երջանիկ լինեմ (իմմ. Ալբերենարանն ընդունելություն գտնի. —

¹¹ Նիկոլայ Դեմենտև, Ն. Դ. - ի վերջնական համար մեր շնորհակալությունն ենք հայտնում ընկ. Ի. Կ. Նիկոլայովին։

Բ. Հ.), ապա ընթերցանության համար գրքից բացի, կաշխատեմ առաջարկել թաթարական Քերականությունը, որի համար ես արգեն շատ նյութ ունեմ եվրոպական լեզուների ձևերի վերածածն:

Մայրենի լեզվի ուսուցման համար մի շարք ձեռնարկների առկայությունը ընդհանուր երևույթ է եղել այն ժամանակ: Դրա լավագույն վկայություններից մեկը հայազգի Հաջի-Յուսիֆ Մելիք-Շահնազարով Շապուրյանի խոստովանությունն է, թե՛ «ես որոշել եմ ուրիշ ազգերի օրինակով կազմել տարրական կրթության համար հինգ գիրք՝ այբբենարան, զրուցարան, բերականություն, քրեստոմատիա և բառարան, որոնցով կարողանան դեկավարվել ուսանողներ, ֆրանսիացիները, պարսիկները և թուրք-թաթարները»: Լեզվի ուսուցման համար Աբովյանն անհրաժեշտ է համարել ունենալ այբբենարան, քրեստոմատիա և բառարան:

Այդպես էլ Մ. Դ.-ն: «Татарский букварь»-ից բացի, նա պատրաստելիս է եղել ընթերցանության գիրք՝ բառարանով և «Татарская Грамматика»-ն, որի համար դեռևս 1839 թ. բավականին նյութ է ունեցել կուտակած: Հարց է ծագում. արդյոք «Татарская Грамматика»-ն նույն «Краткие правила»-ն չէ: Թվում է, թե՛ այո: Այդ երկու ձեռնարկների համեմատությունը տալիս է հետևյալ պատկերը: Երկու դեպքում էլ բացատրությունները շատ պարզ ու մատչելի են, օրինակներով հագեցված: «Букварь»-ում հարցերը դրված են կետերով՝ 1, 2, 3, իսկ «Правила»-ում՝ պարագրաֆներով (§§): Երկու դեպքում էլ համեմատությունները և բերված օրինակները կատարված են ֆրանսերենի, արաբերենի և պարսկերենի, իսկ հիմնականում՝ ռուսերենի հետ:

«Букварь»-ի առաջաբանում Մ. Դ.-ն ընդգծում է ադրբեջաներեն լեզվի ամենալայն օգտագործման հանգամանքը, մի բան, որն ամբողջովին արտացոլված է «Правила»-ի վերնագրում՝ «...на коем говорят во всем Закавказском крае, в Азербейджане и почти во всей Персии».

Եվ վերջապես ոճի ընդհանրության հարցը: Երկուսն էլ սկսվում են միակերպ, այսպես.

ТАТАРСКИЙ БУКВАРЬ

«Язык Турецко-татарский имеет тридцать две буквы...» и т. д.

КРАТКИЕ ПРАВИЛА

«§ 1. Язык Тюрки имеет собственно восемь частей речи...» и т. д.

Սա լուր պատահականություն չպետք է համարել, այլ հեղինակի ոճը: Այստեղ, ինչպես և հետագա ամբողջ շարադրանքի մեջ նկատելի է հեղինակի ուրույն, լակոնիկ ոճը:

Եթե «Татарский букварь»-ով կարող էին առաջնորդվել նույնիսկ ռուսերեն չիմացողները, ապա «Правила»-ն գրված էր միայն ռուսերեն իմացողների համար:

Այս բոլորը գալիս են համոզելու, որ «Краткие правила»-ն եվրոպական լեզուների ձևերի վերածած թաթարական Քերականության համար Մ. Դ.-ի ունեցած շատ նյութերի շարադրանքն է:

Արդ, ի՞նչ ճանապարհով է «Татарская грамматика»-ն Աբովյանի մոտ ընկել: Մ. Դ.-ն իր առաջաբանում գրում է, որ իր այբբենարանը առաջին¹² է

¹² Մ. Դ.-ից առաջ ադրբեջաներեն լեզվի ձեռնարկներ ուրիշներն էլ են գրել: Դրանցից մեկը Հաջի Յուսիֆ Մելիք Շահնազար Շապուրովն է, որն իր «Первая книга для

այդ ուղղությամբ կատարված աշխատանքների մեջ, եվ, որպեսզի այդ ձեռնարկը, որպես առաջին փորձ, անթերի լինի, նա դիմում է աղբյուրներն լեզվին հմուտ անձնավորությունների օգնությանը: «Татарский букварь»-ի առաջաբանում նա գրում է. «Ներկա Այբբենարանը առաջին փորձն է, որ իմ կողմից կազմվել է այս կողմերում թուրքերեն լեզվի իմացությամբ հայտնի մարդկանց խորհրդով կամ օգնությամբ»: Շատ հավանական է, որ «թուրքերեն լեզվի իմացությամբ հայտնի» մարդկանցից մեկը նա համարել է Աբովյանին: Եթե խոսքն իսկապես սոսկ աղբյուրների մասին լիներ, ասենք օրինակ, այդ շրջանում Թիֆլիսի գավառական ուսումնարանի աղբյուրներն լեզվի դասատու Մ. Ֆ. Ախունդովի, ապա նա ինչու պետք է իր իսկ մայրենի լեզուն իմացողին «հայտնի» անվաներ: Սրանով մենք չենք ժխտում Ախունդովի օժանդակության հնարավորությունը, բայց Н. Д.-ի ասածի տակ մենք հասկանում ենք աղբյուրներն իմացող ոչ աղբյուրների: Որպես աղբյուրներն լավ իմացողի, Н. Д.-ն կարող էր «Татарская грамматика»-ն Աբովյանին տալ կարծիքի և խորհուրդների, թերևս խմբագրելու:

Н. Д.-ի «Татарская грамматика»-ի արտագրած մեկ օրինակը Աբովյանի արխիվում գտնվելու այս փաստը պետք է վերագրել Աբովյանի օգնությանը կամ խորհուրդին գիմելու պատճառով նրա մոտ մնալուն:

XIX դարի 30-ական թվականներին լոկ աղբյուրներն լեզվով դասագրքեր գրելու անհրաժեշտությունը չէր, որ զգացվում էր: Մայրենի լեզվի դասագրքեր էին գրում ռուսները, լեհերը, հայերը, աղբյուրները: Այս շրջանում էր, որ Խաչատուր Աբովյանը գրեց իր «Նախաշավիղ կրթութեան ի պէտս նորավարժից» աշխարհաբար առաջին դասագիրքը:

Աբովյանի դասագրքի ոգով և նրա օժանդակությամբ Ախունդովն էլ է սկսել դասագիրք կազմել: Մ. Ֆ. Ախունդովի կողմից այդպիսի դասագրքի ձեռնարկման մասին հիշատակողը դարձյալ Աբովյանն է: Կազանի համալսարանում հայոց լեզվի ամբիոնի պրոֆեսորություն ստանալու համար, որպես գիտական աշխատություն ներկայացրած «Նախաշավիղ»-ին կցած «Դիտողություններ նոր հայերեն լեզվի տարրական գրքի նպատակների մասին» գերմաներեն լեզվով գրած բացատրականում Աբովյանը հաղորդել է.

учащихся КРАТКАЯ АЗБУКА՝ ձեռագիր գրքի առաջաբանում նույնպես հայտնվում է, որ իր կատարած աշխատանքը ևս նախորդը չունի այդ բնագավառում: Նրա «Азбука»-ն «было уже рассмотрено и одобрено в 1837 году, в С.-Петербурге профессорами восточных языков и Его Превосходительством г-ном Министром Народного просвещения и президентом Академии наук Уваровым, который предписал книгу сию принять в руководство во всех Кавказских училищах, где преподаются восточные языки»:

Բանասեր Ա. Ա. Սևիդգադևի կարծիքով այս գիրքը այն ժամանակ Անդրկովկասում արաբատառ շրիֆտներով տպարան չլինելու պատճառով քիչ է մասսայականացել և չի տպագրվել (տե՛ս Известия Азербайджанского филиала АН СССР, 1942 г., № 9, стр. 15). Սա, իհարկե, ճիշտ չէ: Հայտնի է, որ դեռևս 19-րդ դարի 20-ական թվականներին Ներսիսյան դպրոցի տպարանն ունեցել է արաբատառ շրիֆտներ: Գաբրիել Սունդուկյանն Արղանյանների պանսիոնում սովորելիս օգտվել է Դավիթ և Հակոբ Արղանյանների տպարանում 1839 թ. յույս տեսած Н. Д.-ի «Татарский букварь»-ից:

Այդ դիրքը, մեր կարծիքով, չի տպագրվել իր բարդ կառուցվածքի պատճառով: Չեռնարկը բովանդակ է չորս լեզվով՝ ռուսերեն, ֆրանսերեն, պարսկերեն, թուրք-թաթարերեն:

Չեռագիր վիճակով ևս չի տարածվել, որովհետև ինչպես Н. Д.-ն է նշել, բավականին ծախսեր էին կապված արտագրությունների հետ: Բուրդը չէ, որ կարող էին չորսլեզվյան դասագիրքը թեկուզ արտագրել, ուր մնաց տարածել և դասավանդել նրանով:

«Ես իմ բոլոր ուժերը կգործադրեմ ինչպես վերոհիշյալ քերականությունը, այնպես և այլ օգտակար գրքեր կազմելու և թերևս դրանով Կովկասի հայսկույս ուրիշ ժողովուրդների համար էլ օգտակար լինելու Մեր գավառային դպրոցի թաթար ուսուցիչ Միրզա Ֆարալի Ախունդովը յուր հայրենակիցների համար արդեն սկսել է այս մեթոդով մի դասագիրք կազմել»¹³։ Ցավալի է, որ այդ գեղեցիկ նախաձեռնությունից ոչ մի հետքը չի հասել մեզ։

Աբովյանին խորապես մտահոգել է դպրոցներում աղբբեջաններն լեզվի դրվածքն ու ուսուցումը ոչ միայն Թիֆլիսում, այլ Անդրկովկասի մյուս դրպրոցներում։ Նույնու ռուսական դպրոցի ուսուցիչ Լյուդվիգ Քուհնի 1842 թ. սեպտեմբերի 30-ին էմիլիա Աբովյանին գրած նամակից տեղեկանում ենք, որ հաշատուր Աբովյանը ծանոթ է եղել Բաբվի, Շուշու, Շամախու, ինչպես և Հայաստանի ու Վրաստանի մի շարք դպրոցների կյանքին։

Նախապատվությունը տալով պետական դպրոցներին, նա ռուսերեն լեզվի հետ միաժամանակ դրել է տեղական լեզուների պարտադիր ուսուցման հարցը։ Այդ մասին Աբովյանը արտահայտվել է ոչ միայն իր զեկուցագրերում, այլև մանկավարժական երկերում։ Այսպես, «Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ» մանկավարժական վեպում, հերոսներից մեկի՝ Տիգրանի հարցին, թե ո՞ր գիտությունն էս ավելի լավ սովորել, ուսուցիչ Կարապետ Վահանյանը հիշատակում է մի շարք առարկաներ, այդ թվում «Հայի, Ռսի, Թուրքի լեզուն»։

Անդրկովկասի դպրոցների վարչությանն ուղղած «Անդրկովկասյան ուսումնարաններում՝ ինչպես դասավանդման կերպի, այնպես էլ դասատուների նշանակման, ուսման առարկաների բաշխման գործում ներկայումս գոյություն ունեցող մի քանի թերությունների վերաբերյալ և հետագայում դրանք վերացնելու և նրանց ուղղելու միջոցների մասին» զեկուցագրի երկրորդ և երրորդ դիտողություններում Աբովյանը հիմնականում ծանրացել է աղբբեջաններն լեզվի դասավանդման և այդ գործում եղած թերությունը վերացնելու միջոցների վրա։

Տեղական լեզուների, այդ թվում և աղբբեջաններենի, հիմնավոր դասավանդման համար Աբովյանը առաջ է քաշել երկու կարևոր հարց։ Առաջինը՝ տեղական լեզուների դասավանդումը պետք է տարվի հմուտ և ռուսերեն իմացող, առարկան համեմատական եղանակով ավանդող դասատուի կողմից, և երկրորդը՝ անհրաժեշտ է ունենալ ուսման համապատասխան ձեռնարկներ՝ քրեստոմատիա, բառարան, թարգմանական գրականություն։ Բսկ ինչպե՞ս կարելի էր Կովկասում ուրակյալ դասավանդում, երբ մայրենի լեզվով դասագիրք չկար, երբ ստորին դասարաններում տեղական լեզվին տրվում էր շաբաթական ընդամենը երկու ժամ, իսկ բարձր դասարաններում՝ մեկ ժամ։ Զեկուցագրերից մեկում նա նպատակահարմար է գտնում առաջին դասարանում ռուսերեն աղոթք սովորելու ժամերը տրամադրել աղբբեջաններն լեզվի դասավանդմանը։

Պաշտպանելով աղբբեջաններն լեզվի իրավունքները, դնելով դասաժամերի ավելացման հարցը, Աբովյանը պայքարում էր մի կողմից աղբբեջաններն լեզվի ինքնուրույնության համար և մյուս կողմից՝ դպրոցներում արմա-

¹³ Խ. Աբովյան, Ելժ, հ. 5, էջ 50 (ընդգծումն Աբովյանինն է)։

տակալած միջնադարյան-նահապետական հետամնաց դասավանդման մեթոդների ու մոլլաների մասնավոր դպրոցների դեմ:

Աբովյանին առանձնապես շատ է հուզել զրավորի հարցը: Մոտիկից ծանոթ լինելով աղբյուրներին լեզվի դասավանդմանը՝ նա ցավով նշել է, որ դպրոցներում աղբյուրների մանուկները մայրենի լեզվով չեն սովորում, որ սեփական լեզվով «չեն գրում, միայն խոսում են»¹⁴:

Աբովյանը պայքարել է աղբյուրներին լեզուն թերագնահատողների դեմ: Հեկուցագրերից մեկում նա ասում է. «Իսկ թուրքերին լեզուն, ես մինչև օրս էլ չեմ հասկանում, թե ինչու է մտցված անգր<կովկասյան> ուսումնարաններում ավանդվող առարկաների ցանկի մեջ: Մի՞թե ոչ ոքի հայտնի չէ, որ թուրքերին հենց իրենց՝ թուրքերի կողմից արհամարհվում է որպես անպետք և ոչ մի բանի անընդունակ լեզու»¹⁵:

Հարցի այսպիսի դրվածքը թող տարակուսանք չպատճառի: Աբովյանն այստեղ նկատի չունի դպրոցներից առհասարակ աղբյուրներին լեզվի վտարումը, ոչ, ընդհակառակը՝ Տեսնելով, որ ազգային լեզվից և կուլտուրայից հրաժարվող, ֆեոդալական-նահապետական շրջանի հովերով ապրող հետամնաց մարդկանց կողմից արհամարհվում է այդ լեզուն, նրա վրա գերիշխում են պարսկերենն ու արաբերենը, — գրանով նա դպրոցների գերատեսչության ուշադրության է հրավիրում լրջորեն զբաղվելու աղբյուրներին լեզվի գնահատման և բովանդակալից դասավանդման հարցով: Հենց այդ հարցի առթիվ գրած ծանոթության մեջ Աբովյանը տալիս է աղբյուրներին լեզվի լավագույն գնահատականը: Այն է՝ «...այդ ճիշտ չէ (աղբյուրներին անպետք և ոչ մի բանի անընդունակ լեզու չէ. — Բ. Հ.), սուտ է, որը ծագում է ընդհանրապես նրանից, որ մահմեդականները ֆանատիկորեն կապված են արաբերենի և պարսկերենի հետ, գտնելով, թե այդ լեզուների մեջ են պարփակված իմաստության, գիտության և բարիքների բոլոր աղբյուրները»¹⁶: Չէ՞ որ միջնադարում այդպես էին գատում նաև հին լեզուների մասին: Բայց բուրժուական տեսակի մեջ միակ բանաստեղծականն է, հնչեղը և, քերես, բերականական տեսակետից ամենահեշտն է բոլոր լեզուներից»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, Աբովյանը բավականաչափ հիմնավորված է տալիս հետադիմական, ռեակցիոն հայացքների տեր մահմեդականների սխալ տեսակետների քննադատությունը: Նա ուզում էր վեցացնել այն միֆը, թե իբր արաբերենն ու պարսկերենն են միայն ընդունակ արտահայտելու գիտությունն ու իմաստությունը: Եվ այդ կույր հավատի ստվերի տակ նսեմանում էր աղբյուրներին լեզուն:

Աղբյուրներին լեզվի դասավանդման հետ կապված դժվարություններից մեկը, ինչպես նշվեց վերևում, աղբյուրներին լեզվով դասագրքի բացակայությունն էր: Աբովյանը նշել է, որ աղբյուրներին լեզվով գիր, գրականության և բացառապես ոչինչ չլինելու պատճառով աղբյուրները սովորում են միայն պարսկերեն կամ արաբերեն, որ «նույնիսկ չնչին գրություններն էլ

¹⁴ Նույն տեղում, հ. 3, էջ 64:

¹⁵ Նույն տեղում, հ. 5, էջ 192:

¹⁶ Այս մտքերը հետագայում արտահայտություն են գտել նաև Ախունդովի լեզվագիտական ուսումնասիրություններում:

¹⁷ Խ. Աբովյան, Եկտ, հ. 5, էջ 192 (ընդգծումներն իմն են. — Բ. Հ.):

կազմվում են բացառապես պարսկերեն»։ Ադրբեջաներենի անվան տակ մուլանները երեխաներին հրամայել են պարսկերեն դրականություն։ Դրանք ոչ թե դասագրքեր էին, այլ գեղարվեստական կամ պատմագրական ստեղծագործություններ, որոնցից Աբովյանը հիշատակում է Սաադիի «Գուլեսթանը», Հաֆիզը (Գավիս) և Թարիխ Նադիրը։

Նկատի առնելով ադրբեջաներեն լեզվի դասավանդման հետ կապված դժվարությունները, Աբովյանն ասում է. «Եթե մեկը ցանկանում է թուրքերեն սովորել նրա համար, որպեսզի հետագայում պետք գա որպես թարգման, ապա նա անպայմանորեն պետք է գիտենա թե՛ պարսկերեն և թե՛ արաբերեն և, ով գիտե այդ լեզուները, պետք է խղճի մտքը համաձայնի ինձ հետ, որ դրանք սովորելու և նույնիսկ միջակ իմասնալու համար, անհրաժեշտաբար պետք է, համենայն դեպս, բոլոր պարապմունքներից բոլորովին ազատ 6 կամ 8 տարի, եթե ոչ ավելի, անխոնջ համբերություն, անընդհատ վարժություն, որպեսզի այդ լեզուները գիտենա ոչ թե անվանապես, այլ օգտավետ կերպով»¹⁸։

Ադրբեջաներեն լեզվի դասավանդման դրվածքը դպրոցում բարձրացնելու համար, բացի դասագրքի բացակայությունից և դասաժամերի սակավությունից, կար ուրիշ երկու անհրաժեշտ հանգամանք ևս։ Դրանցից առաջինը Աբովյանը համարում է «դասավանդման վատ մեթոդը» և երկրորդը՝ «տառերի, վանկերի և բառերի հիերոգլիֆական խառնուրդը», որը դժվարություն է պատճառում նույնիսկ ուսյալ մարդուն։

Փաստ է, որ ադրբեջաներեն լեզվի դրվածքը բարձրացնելու նպատակով է, որ նա Երևանի գավառական դպրոցից ազատում է մահմեդական կրոնի և ադրբեջաներեն լեզվի դասատու Միրզա Բադի Մուլլա Ահմեդ օղլուն։ Չնայած հետադիմական ուսուցիչները խռովություններ էին հրահրում Աբովյանի դեմ, բայց նրան հաջողվում է դպրոցական իշխանության միջոցով դպրոցն ազատել մի քանի տգետ ուսուցիչներից։ Այդ առթիվ Աբովյանը գրել է. «Ամեն մի մարդ, որ հազիվ գրագետ է և չունի ոչ վկայական ոչ էլ թույլատվություն իշխանության կողմից, պահում է աշակերտներ»։ Պայքարելով առանց թույլատվության «դպրոց» ունեցող մուլանների և տգետ դասատուների դեմ, Աբովյանը միաժամանակ ամեն կերպ աշխատել է ավելի շատ ադրբեջանցի երեխաներ ներգրավել գավառական դպրոցը։

Մեզ հետաքրքրող թեման թերի կլիներ, եթե չշոշափվեր մի հարց ևս։ Կարդում և կամ գրում էր արդյոք Աբովյանը ադրբեջաներեն՝ հասկանալի է արաբերեն տառերով։ Ադրբեջաներեն լեզվի մասին նրա հայտնած կարծիքները համոզում են, որ նա ծանոթ է եղել արաբատառ գրելաձևին։ Առանց դրա իմացության նա չէր կարող հասկանալ այն բարդությունը, որ ներկայացնում էր արաբերենի և պարսկերենի յուրացումը։

Այսուամենայնիվ Աբովյանի գրագրություններում արաբատառ ադրբեջաներենով գրած և նրա գրչին պատկանող որևէ փաստաթուղթ չի պահպանվել (բացի նրա աշակերտ Միրզա Կաֆարի՝ Աբովյանին ուղղած նամակից)։

Ադրբեջաներեն լեզվի նկատմամբ Աբովյանի ցուցաբերած հետաքրքրության մասին նշել են նաև եվրոպացի մի շարք գիտնականներ ու ճանապարհորդներ։ Նրանցից, օրինակ, բավարացի գիտնական Մորից Վագները Թիֆ-

¹⁸ Նույն տեղում, էջ 193։

լիսում այցելելով Աբովյանի դպրոցը, զարմանքով նշել է, որ «տասը, տասնորս տարեկան տղաները լավ կարդում ու գրում էին հայերեն, վրացերեն, թաթարերեն, ռուսերեն, ֆրանսերեն ու գերմաներեն»¹⁹:

Խաչատուր Աբովյանն իր բոլոր ուժերը նվիրաբերեց իր և հարևան ժողովուրդների լուսավորության ու ինտերնացիոնալիզմի ամրապնդմանը: Սակայն ժամանակի հետադիմական պայմաններում, որի ղոհը դարձավ նա, չկարողացավ մինչև վերջ իրագործել իր նպատակները: Բայց, շնայած դրան, նրա ծավալած գործը կես ճանապարհին չմնաց: Այդ գործը նոր ավյունով շարունակեց նրա մեծ բարեկամ ու հետևորդ Միրզա Ֆաթալի Ախունդովը: Վերջինիս օրինակին հետևեցին XIX դարի երկրորդ կեսի ադրբեջանական գրականության մյուս խոշոր վարպետները, ընդհուպ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Եվ, շնայած ադրբեջանական առաջադեմ գործիչների ծավալած ակտիվ պայքարին, ադրբեջաներեն լեզվի ինքնուրույնությունը լիիրավ քաղաքացիություն ստացավ Ադրբեջանում սովետական իշխանության հաստատումից հետո: Ադրբեջաներեն լեզուն այժմ դարձել է եղբայրական Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետության պետական լեզուն: Իսկ ադրբեջանական լեզվի ինքնուրույնության պահպանման համար տեական պայքարում քիչ չեն Խաչատուր Աբովյանի կատարած ծառայությունները:

Б. М. Овакимян

ХАЧАТУР АБОВЯН И АЗЕРБАЙДЖАНСКИЙ ЯЗЫК

Р е з ю м е

Основоположник новоармянской литературы, просветитель-демократ Хачатур Абовян в своей литературной и педагогической деятельности обращался также к вопросу оценки культуры азербайджанского народа и языка.

В своих произведениях, в частности, в романе «Раны Армении» и рассказе «Турчанка», Абовян использовал большое количество азербайджанских слов, предложений и поговорок (высказываний) с их переводами, что свидетельствует не только о его знакомстве с бытом азербайджанского народа, но и о том, что он свободно владел этим языком.

Знание азербайджанского языка и культуры обусловлено также тесной связью Абовяна с азербайджанцами. Он был в дружеских отношениях с прогрессивными деятелями своего времени: с основоположником азербайджанской драматургии, философом и общественным деятелем Мирза Фатали Ахундовым и поэтом-лириком Мирза Шафи Вазехом. Служа в одном и том же тифлисском уездном училище, вначале с Ахундовым (1837—1840), а затем с Мирза Шафи (1840—1843), Абовян высоко ценил этих деятелей.

¹⁹ «Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին», Երևան, 1941, էջ 19—20:

В своей педагогической деятельности Абовян боролся против феодально-патриархального отношения к азербайджанскому языку и всячески старался освободить этот язык от персидского и арабского влияния, создать учебники и увеличить количество уроков азербайджанского языка в школах. Этим и можно объяснить тот факт, что в его архиве ныне хранится рукопись грамматики азербайджанского языка, автором которой мы считаем преподавателя тифлисской гимназии Николая Деметьева.

В своей характеристике азербайджанского языка, Абовян писал, татарский язык единственный в своем роде поэтический, звучный и легчайший, может быть, в грамматическом отношении, между всеми языками.

Велики заслуги Х. Абовяна в длительной борьбе за сохранение самобытности азербайджанского языка, ставшего ныне государственным языком братской Азербайджанской Советской Социалистической Республики.